

I

Հայոց ցեղասպանության
100-րդ տարեկից

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայոց ցեղասպանությանն ու Հայկական հարցին ռուս գրական գործիչներն անդրադարձել են 1890-ական թվականների երկրորդ կեսից: Այդ ստեղծագործությունների շարքում զգալի է հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ ցավն ու անհանգստությունը և ձգտումը՝ սեր ու կարեկցանք արթնացնել ռուս ժողովրդի մեջ հայության նկատմամբ: Անդրադառնալով հայ ժողովրդի ողբերգությանը, ձայն բարձրացնելով հանուն արդարության՝ դրանով իսկ նրանք նպաստել են Հայաստանի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին ճշմարտության տարածմանը:

Ռուս իրականության մեջ առաջինը Ե. Ալիբեկովայի «Ժամն է» (1896) բանաստեղծությունն է գեղարվեստորեն ներկայացված հայ ժողովրդի ողբերգությունը («Արյունոտ Եղեռնը փոթորկում է, ողջ Թուրքիան հայերին կոտորում է»), հայերի փրկությունը բանաստեղծուհին տեսնում է Ռուսաստանի օգնությամբ: Մարդկային անմխիթար ցավը, թուրք ջարդարարների հանդեպ վրդովմունքը, հայ ժողովրդի լուսավոր ապագայի նկատմամբ հավատը իրենց գործերում արտահայտել են Եվգենի Սորոկովը, Վլադիմիր Շուֆան և ուրիշներ: Ահա Մոսկվայում 1897 թ. օգոստոսին Ե. Սորոկովի գրած «Բարև» բանաստեղծությունը.

*Привет тебе, народ многострадальный!
Ты верить в будущность свою не устаешь,
Под игом вековым на родине печальной
Судьбу жестокую ты с твердостью несешь.
И лишь порой, когда ордой остервенелой
Свирепый курд и турок закоснелый,
Глумяся над тобой, губя твоих детей,
Хотят стереть тебя с лица земли твоей,
Как плачущий прибой, к подножью Арарата*

Они стекаются замученной толпой
 Искать прибежища, не помощи, у брата.
 Да, помощи им нет, с врагом неравен бой!
 Давно уж стон твоих селений разоренных
 И к человечеству, и к небу вопиет.
 Еще не пробил час, оставленный народ,
 Признанья прав твоих священных и законных;
 Но верь, крепись и жди – желанною зарей
 Освобождение блеснет и над тобой.
 Когда Европы мощь зовется христианской,
 Она не даст, чтоб вновь душил тебя ислам
 И кровью обаграл твой крест грегорианский.
 Грядущий век несет конец твоим слезам.
 Исчезнет гнусный мрак насилья, жертв, без шума.
 На старых пажитях воспрянет новый труд,
 И возрожденные долины Эрзерума
 Красою мирною роскошно зацветут¹.

Վեսելովսկիների նշանավոր ընտանիքի վերջին ներկայացուցիչ, գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ Յուրի Վեսելովսկին խոշոր հետք է թողել հայագիտության մեջ: Այդ բնագավառում նրա գործունեությունն ու ներդրումը լայնորեն հայտնի է: Ուշագրավ է, որ Յու. Վեսելովսկին իր ազգանունը հայերեն ստորագրում էր Գևորգ Մելիք-Ուրախյանց: Ստորև հակիրճ ներկայացնենք հայոց ողբերգության հանդեպ նրա արձագանքն ու մոտեցումները:

Յու. Վեսելովսկին ռուս իրականության մեջ առաջիններից էր, որ ուսումնասիրել և պրոպագանդել է հայ գրականությունն ու մշակույթը, պատմությունը, գրել է Հայաստանին նվիրված մի շարք բանաստեղծություններ, սերտ կապերով կապված է եղել հայ գրական շրջանների հետ: «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը» (1895) և «Թուրքահայաստանի ողբերգությունը» (1914) ուսումնասիրություններում հայագետը հանգամանորեն ներկայացրել է Հայկական հարցի ծագումն ու պատմությունը, դրա շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը, անդրադարձել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների նախագծերին և թուրքական կառավարության տված «երաշխիքներին»: Վեսելովսկին խոր ցավով թվարկել է հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերը. «1890-ին տեղի ունեցավ Էրզրումի հայտնի կոտորածը, ընդ որում, հայ բնակչության ընդդիմության թույլ փորձերը սանձարձակ թուրք զինվորներն ու պաշտոնյա-

¹ Sté u Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, с. XLVII.

ները խեղդեցին արյան մեջ: 1894-ին կատարվեց Մասունի ահավոր սպանողը, հրեշավոր մի բան՝ թուրքական կանոնավոր զորքի և քուրդ խուժանի համերաշխ գործակցությամբ, այս կոտորածը, որի հետ կապված մի շարք առանձին դրվագներ մեկը մյուսից զայրացուցիչ են, 1895 թվականի ջարդերի ու սպանությունների հետ իրագործվում էին ծրագրված ու պարբերաբար»²: Այդ արյունոտ ջարդերի նպատակը, ըստ հայագետի, արևմտահայ ազգաբնակչության ոչնչացումն էր կամ «հնարավորին չափ» հայկական տարրի կրճատումը Արևմտյան Հայաստանում:

«Թշվառ երկրի զավակները» (1916), «Տառապյալ երեխաներ (թուրք-հայկական իրականության սարսափների աշխարհից)» (1917) հոդվածներում Վեսելովսկին բացահայտել է ցեղասպանության քաղաքականության գոհերի՝ հայ երեխաների ողբերգությունը, մերկացրել թուրքական իշխանություններին, որոնք պետական անհրաժեշտություն են համարել «հայերին վնասազերծելը»: «Այդ սովորական դարձած» «գրասենյակային կեղծիքը», որին բազմիցս դիմել է Թուրքիան հետքերը վերացնելու կամ ջրից չոր դուրս գալու համար, երբ նրան բռնել են դաժանության և անօրինության մեջ, իհարկե, շատ բացահայտ էր, և թուրքական դիվանագետներին չհաջողվեց ոչ մեկին շփոթեցնել: Եվ որ «հեղափոխականների» շարքերում, որոնց դեմ պայքարում էր թուրքական կառավարությունը, կային 10 տարեկանից փոքր երեխաներ, երբեմն նաև ծծկերներ, հաստատված է բոլոր նրանց վկայություններով, ովքեր չեն կորցրել արդարության և անաչառության զգացումը»³, – վրդովմունքով գրել է նա:

«Հայերի ճակատագիրը ամերիկյան գրողի պատկերմամբ», «Լավ օրերի արշալույսին», «Հայերի ճակատագիրը և ռուսական նոր սերունդը», «Թուրքահայաստանի ճակատագիրը» և հրապարակախոսական այլ հոդվածներում Վեսելովսկին՝ անկեղծ մարդասիրությամբ և համակրանքով բազմաչարչար ժողովրդի նկատմամբ, մերկացրել է թուրքական կառավարության հակահայ քաղաքականությունը, շոշափել Հայաստանի հասարակական-քաղաքական դերի, նրա ներկայի ու ապագայի հարցերը: Հայտնի է, որ նա հրատարակության էր պատրաստում «Հայկական հարցը և ռուս հասարակայնությունը» գիրքը:

Յու. Վեսելովսկին նաև ռուս առաջին բանաստեղծներից էր, որ Հայաստանին ու հայերին նվիրեց բանաստեղծությունների շարք՝ «Հայերին», «Հայաստանում», «Հայ ժողովրդին», «Ավերակների վրա», որը հայ ժողովրդի հանդեպ անկեղծ ցավի արտահայտություն էր: «Հայաստան» բանաստեղծության (1911) մեջ գրողը գովերգում է հերոսների երկիրը, հայ ժողովրդի՝ ազատության հասնելու անկոտրում կամքը, հավատը լուսավոր ապագայի հանդեպ.

² Ю. Веселовский. Трагедия Турецкой Армении. М., [б. г.], с. 18–19.

³ «Армянский вестник» (М.), 1917, № 39–40, с. 4.

*... Страна борцов, подвижников, героев!
Ты скорбный крест, Армения, несла...
Средь диких зверств, пожаров и разбоев
Грозилась смерть – но ты не умерла!*

*Пусть ты была безмолвна, как могила,
Угасла жизнь, не стало красоты, –
Но ты в душе глубоко сохранила
Счастливых лет порывы и мечты.*

*И в дни борьбы великой и тревожной
Вновь над тобой рассеялся туман, –
И стала вновь твоя мечта возможной,
Забытый край, печальный край армян!*

*... Пусть злобен враг, – и, как в былые годы,
Твоих детей несчастных льется кровь:
Армянский край, ты долго ждал свободы, –
Твой близок день... он не померкнет вновь!⁴*

Հայերի ճակատագրի մասին են նաև Յու. Վեսելովսկու «Վարդան Մամիկոնյանի մահը» (1916), «Հայ կալանավորի մտորումները» (1916) բանաստեղծությունները: «Նոր տարվա նախաշեմին» (1918) բանաստեղծության մեջ հեղինակը հույս ունի տեսնել Հայաստանը թուրքական լծից ազատագրված. «Թող երկար սպասված ազատությունը փայլատակի նաև Հայաստանի համար»:

Գրող, հասարակական գործիչ Մաքսիմ Գորկին, խորապես ցնցված էր Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում կատարվող հակահայկական իրադարձություններից: Նա խոր և բազմակողմանի ծանոթ էր հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, կապեր ուներ հայ հասարակական-քաղաքական շատ գործիչների հետ: Գորկին բազմիցս անդրադարձել է հայ ժողովրդի ճակատագրին, հանդես եկել նրա շահերի պաշտպանությամբ: 1905-ին գրել է «Կովկասյան իրադարձությունների մասին» հոդվածը, որտեղ բացահայտել է ցարական ինքնակալության դերը հայերի և կովկասյան թաթարների (ադրբեջանցիներ) միջև ազգամիջյան կռիվներ հրահրելու գործում, որի հետևանքով Անդրկովկասում տեղի ունեցան հայերի սպանդ ու կոտորածներ: Այդ իրադարձությունների մասին «Ռուսական ցար» պամֆլետում («Ամերիկայում» շարքից, 1906) Գորկին գրել է. «Կովկասում հայերը թուրք հավատարիմ հպատակ թաթարների ձեռքով ջարդվեցին: Մա-

⁴ Русские писатели об Армении. Сборник. Сост.: С. Арешян, Н. Туманян. Ереван, 1946, с. 71.

կայն այդ իրադարձությանը տրվել է ազգային ատելության տեսք և պետք էր հավատալ, որ այդ այդպես է, և դա է ճշմարտությունը: Բայց ինչպես կարող էր պատահել, որ հայերն ու թաթարները, որոնք դարերով ապրել են միասին, հանկարծ անհաշտ թշնամիներ դառնային: Ի՞նչ տարօրինակ բան կա այստեղ: Չէ՞ որ երկրաշարժը նույնպես լինում է հանկարծակի... Երբ տաճկական սուլթանը ստիպեց քրդերին ու իր զինվորներին ոչնչացնել հայերին, նրանց ոչնչացրին տասնյակ հազարներով...»⁵:

1913 թ. հունվարի վերջերին Մ. Գորկուն գրած Վ. Լենինի պատասխան նամակից հայտնի է մեծանուն գրողի մտահոգությունը Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակից: Բոլշևիկյան կուսակցության առաջնորդը գրում է. «Դաշնակների մասին ես ոչինչ չեմ լսել: Բայց լուրերն անհեթեթ են համարում (խոսքը վերաբերում է դաշնակցության ղեկավարությանը Արևմտահայաստանում նախապատրաստվող ապստամբության հնարավորությանը. այդ մասին հաղորդվում էր «Ռուսկոյե սլովո» թերթի 1913 թ. հունվարի 9-ի համարում զետեղված «Թուրքահայերը և Ռուսաստանը» հոդվածում.– Մ. Զ.): Դա հնարել է կառավարությունը, որը ցանկանում է լափել Թուրքահայաստանը»⁶:

Գորկու խմբագրությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուն» (1916) ևս յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ:

Հայ ժողովրդի ողբերգության հանդեպ իր վերաբերմունքը Գորկին արտահայտել է «Սովետական Միությունով» (1929) ակնարկների շարքում, մասնավորապես, գրելով. «Ակամա մտաբերում ես XIX դ. վերջի – XX դ. սկզբի Հայաստանի ողբերգական պատմությունը, Կ. Պոլսի կոտորածը, Սասունի ջարդը, «մեծ մարդասպանին», իրենց «քրիստոնյա եղբայրների» աղետի հանդեպ «կուլտուրական» Եվրոպայի զազրելի անտարբերությունը, Հայաստանի եկեղեցական ունեցվածքի ամոթալի թալանը ինքնակալական կառավարության կողմից, վերջին տարիների թուրքական արշավանքների սարսափները. իրոք, դժվար է հիշել բոլոր ողբերգությունները, որ վերապրեց այս եռանդուն ազգը: Զարմանալի արագ և հեշտությամբ են մոռանում նման փաստերը պարոններ «հումանիստները», իդեալիստները, ազահույության, չարության, ստրկության, ժողովրդական զանգվածների լկտի բնաջնջման վրա հիմնված «մշակույթի» պաշտպանները: Մինչև ականջները արյան ու կեղտի մեջ թաղված մշակույթի պաշտպանների սուտն ու երեսպաշտությունը հասնում է բացահայտ խելահեղության, հանցագործության, որին արժանի պատիժ չկա»⁷:

Պետերբուրգի «Բիրժնիե վեդոմոստի» թերթի թղթակից, հրապարակախոս Ս. Օլգենինը (Անտուան Բերեզովսկի-Օլգինսկի) 1912-ի վերջին – 1913-ի սկզբին եղել է

⁵ Горький и Армения. Статьи, письма, воспоминания и «хроника». Ереван, 1968, с. 27.

⁶ Տե՛ս Վ. Բ. Լենին. Երկերի լիակատար ժողովածու, հ. 48, Երևան, 1983, էջ 191:

⁷ М. Горький. Собр. соч., в 30-и т., т. 17. М., 1952, с. 134.

Թիֆլիսում: Իր դասախոսություններում անդրադառնալով Հայկական հարցին՝ նա նշել է, որ դա հերթական քաղաքական հարցն է բալկանյան խնդիրներից հետո, որը պետք է լուծվի: Օլգենինը շուրջ 4 ամիս եղել է Արևմտյան Հայաստանում և ուսումնասիրել արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը: Իր տպավորությունները ներկայացրել է «Անհետացող Հայաստանը» խորագիրը կրող հոդվածաշարով, որը տպագրվել է «Բիրժնիե վեդոմոստիում», թարգմանվել է հայերեն և տպագրվել Թիֆլիսի հայ մամուլի էջերում: Օլգենինի գործունեությունից անհանգստացած՝ թուրքական իշխանությունները մեղադրել են նրան հակաթուրքական քարոզչության մեջ և հարկադրել հեռանալ երկրից: Թիֆլիսում և Բաքվում նա հանդես է եկել Հայկական հարցի մասին դասախոսություններով՝ նշելով, որ Հայաստանը տնտեսական, քաղաքական և ռազմական առումներով չափազանց էական դեր է խաղում Ռուսաստանի համար, ուստի «Հայկական հարցը լուծելու նախաձեռնությունը պիտի իր վրա վերցնի Ռուսաստանը: Դա նրա թե՛ բարոյական պարտքն է և թե՛ պետական շահն է պահանջում: Ռուսաստանը պիտի ուղղի իր անցյալի սխալները. եթե այժմ էլ Հայկական դատը իր լուծումը չստանա, Ռուս պետությունը ապագայում շատ մեծ վտանգների առաջ պիտի կանգնի: Ռուսաստանը պիտի պահանջի ոչ միայն ռեֆորմների գործադրություն, այլև պիտի իրականացնի Հայաստանի ավտոնոմիան: ... Ամեն մի օրվա ուշացումը՝ այդ հարցի լուծման համար մահացու հարված է թե՛ Ռուսաստանի և թե՛ հայերի նկատմամբ»⁸:

1914 թ. հունվարի 26-ին կնքված ռուս-թուրքական հայտնի պայմանագրով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ անցկացնել: Դրանից երկու ամիս անց՝ մարտի վերջերին, Հայկական հարցի շուրջ դասախոսություններով Անդրկովկաս է ժամանում Պետերբուրգի զինվորական-իրավաբանական ակադեմիայի պրոֆեսոր, գնդապետ-լրագրող, հրապարակախոս Վլադիմիր Պլետնյովը: Մարտի 20-ին նա ներկա է լինում Հայ գրողների կովկասյան ընկերության 33-րդ հերթական երեկույթի առաջին՝ երաժշտական բաժնին, որի ընթացքում էլույթ են ունենում պարսից շահի պալատական երգիչներ-երաժիշտներ: Մարտի 25-ին Թիֆլիսի Արքունական թատրոնի լեփ-լեցուն դահլիճում հանդես է գալիս «Հայկական հարցը և Եվրոպան» վերնագրով դասախոսությամբ: Մինչև այդ՝ մարտի 22-ին, Վ. Պլետնյովը դասախոսություն էր կարդացել Երևանում, մարտի 23-ին էլ՝ Ալեքսանդրապոլում: Մամուլի հաղորդումներով՝ նա բազմակողմանիորեն ուսումնասիրել է Հայկական հարցը, Հայաստան երկրի պայմանները, հայ ժողովրդի անցյալն ու ներկան: Ըստ այդմ՝ նա պատմական ակնարկի ձևով խոսել է Հայկական հարցի զարգացման փուլերի, այդ հարցում Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի և Թուրքիայի շահերի ու դիրքորոշումների մասին ու եզրակացրել. «Ռուս

⁸ Ա. Զաքարյան. Արևմտահայ իրականությունը ռուս հրապարակախոս Ս. Օլգենինի գնահատմամբ, Երևան, 2014, էջ 48:

ժողովուրդը պետք է ձեռք մեկնի տառապող հայերին: Մեռնում է մի տաղանդավոր ժողովուրդ... թո՛ղ Ռուսաստանը, ամբողջ ռուս ժողովուրդը հանուն մարդկային կուլտուրայի, հանուն խղճի փրկի կորստի ենթակա այդ ժողովրդին»⁹:

1915-ի սեպտեմբերի կեսերին Կովկասյան ճակատում է եղել բանաստեղծ Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկոն: Արևմտյան Հայաստանում նա ամենուր դարձավ թուրքերի կատարած բարբարոսությունների ականատեսը: Հարազատ ժողովրդի (գրողի մայրը հայուհի էր) ծանր ճակատագրի հանդեպ մտահոգությամբ, սիրով ու կարեկցանքով են լեցուն բանաստեղծի ստեղծագործությունները: «Փոքրիկ պոեմներ» ընդհանուր խորագրով «Եփրատի ափերին» բանաստեղծությունների շարքը, «Երգեր Արևմտյան Հայաստանի մասին» վերնագրով բանաստեղծությունները տպագրվել են «Ռուսսկոյե սլովո» թերթում և «Արմյանսկի վեստնիկ» հանդեսում: «Ինչո՞ւ» բանաստեղծության մեջ Նեմիրովիչ-Դանչենկոն զայրությամբ մեղադրում է հետադիմական և մեծապետական շովինիստներին, որոնք չգիտեն հայ ժողովրդի պատմությունը, ժողովուրդ, որը կարող էր փրկվել դավաճանությամբ ու հարմարվելով, սակայն նախընտրել է «առաքելական մահապատիժը»:

Ուշագրավ է «Տարագիր աղոթքը» բանաստեղծությունը (1917), որտեղ սրտառուց խոստովանությամբ մարմնավորված է հեղինակի, իրոք, որդիական սերը հայ ժողովրդի և Հայաստանի հանդեպ: Ավելորդ չէր լինի այդ երկարաշունչ քերթվածից քաղել որոշ հատվածներ՝ Արևմտյան Հայաստանի ավերակների, ռուս զինվորների հայրերի ու հասակակիցների եղբայրական գերեզմանների պատկերներով, որոնք վերջավորվում են հայ ժողովրդի զավակների՝ իր եղբայրների հետ այդ հողի վրա, ինչպես Գողգոթայում, խաչվելու դրամատիկ պատրաստակամությամբ: Ահա այն.

*Я помню вас, чудесные сады
Далекой родины над братскою могилой
Моих отцов, сраженных в час беды
У мирных очагов слепой звериной силой.
Ты вся теперь – печальный саркофаг
В развалинах церквей, дворцов и старых башен...
Там свищет бичь, неистовствует враг,
И льется, как вино, святая кровь из брашен.
О, нет таких неимоверных мук,
Каких бы ты, моя Армения, не знала
С тех пор, как вся под игом подлых рук,
Прекрасный рай земной, ты черным адом стала.*

⁹ А. Закарян. В. Д. Плетнев об Армянском вопросе (накануне Первой мировой войны).–ИФЖ, 2014, ¹ 1, с. 27.

Но ты жива, и в трепете чинар,
 И в говоре ручьев, и в тишине священной –
 Родная песнь, в ней славных предков жар,
 В ней слезы матерей, в ней клич грозы военной...
 Армения! Ты слышишь ли набат?
 Твои ли шелестят знамена издалека?
 Прими меня, многострадальный брат.
 Без злого ропота и позднего упрека...
 Я весь остыл в холодной стороне.
 Вдали я забывал тоску родимых песен
 И мать, чья кровь горячая во мне...
 И край, мой отчий край казался чужд и тесен.
 Но в эту ночь уже не стало сил,
 Вся жизнь моя – как темные кулисы
 Над тишиной торжественных могил,
 Где желтый мирт цветет, и плачут кипарисы.
 Голгофою Армении родной
 Явилось прошлое... И лучше мне, как брату,
 Быть на кресте мучительном с тобой,
 Чем мстительно кричать: «Распни ее» Пилату...¹⁰

Հայաստանը, նրա ժողովուրդը, ավանդույթները, մշակույթը շատ մոտ ու հարա-
 գատ էին պոետ-գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինին: Նա ռուսական բանակի
 երևելի գորավարներից էր, Կովկասյան ճակատի ռազմական գործողությունների
 ակտիվ մասնակիցը: 1917-ին Թիֆլիսում տպագրվեց նրա «Մեերի դուռը: Վանի
 արձագանքները» գիրքը: «Վանի արձագանքները» շարքը իր ծանոթագրություննե-
 րով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Կովկասյան ճակատի, մասնա-
 վորապես, Վանի ուղղությամբ կատարվող մարտական գործողությունների լուսա-
 բանման տեսանկյունից: 1915-ի նոյեմբերից 1916-ի մարտը Կուլեբյակինը գտնվում
 էր «մինչև վերջ ավերված և մահով հագեցած» Վանում: Տեսածի ու լսածի անմիջա-
 կան տպավորությամբ գրված նրա բանաստեղծությունները («Հին Վանը», «Վանի
 անկումը», «Կույրը» և այլն) աչքի են ընկնում ճշմարտացիությամբ և անկեղծու-
 յամբ, դրանցում արտահայտված է մեծ հարգանք հայ ժողովրդի նկատմամբ, որը
 «ողորմություն չի խնդրում», այլ խիզախորեն պայքարում է իր գոյատևման համար՝
 ապավինելով ռուսական զորքի զալստյանը: Կուլեբյակինը, հիացած Հայաստա-
 նով, գովերգել է նրա սքանչելի գեղեցկությունը, պատմամշակութային զարմանալի

¹⁰ «Армянский вестник», 1917, № 1, с. 9.

հուշարձանները, Վանի տեսարանները («Վանա լճում», «Վանա ժայռը», «Աղթամար», «Վարազա վանք» և այլն)¹¹:

Ա. Կուլեբյակինը բարեկամական կապերի մեջ էր հայ մտավորականների, հատկապես Հովհ. Թումանյանի հետ, որին նվիրել է (1919 թ. փետրվարի 20-ին) հայ ժողովրդի լուսավոր ապագայի հանդեպ անհուն հավատով մի բանաստեղծություն («Ո՛հ, չի խամրի արևը Հայաստանի՛ »):

«Արաքս» (1919) բանաստեղծության մեջ էլ պոետը դիմել է հայ ժողովրդի պատմական անցյալին, որի ողբերգական էջերի վկան էր Արաքս գետը.

... Немолчный гул воды, неясный полусвет
И ветра замкнутого вздохи.
На всем угрюмый тон, оттенок бездны лет,
Печать таинственной эпохи.

Из сумрака времен события встают,
Немые тени оживают,
И кажется порой, что камни вопиют,
А волны кровь переливают¹².

Վալերի Բրյուսովը հայ ժողովրդի պատմությունն ու պոեզիան ուսումնասիրելիս գրել է Հայաստանին նվիրված մի շարք ողբերգական բանաստեղծություններ: Ոգեկոչող խոսքերով դիմելով հայ ժողովրդին՝ նա հավատով լեցուն գրում է, որ հայերին հատուկ է անկոտրում ոգի, պայքարի կամք և անսպառ կենսունակություն: Առաջին իսկ՝ «Հայաստանին» (1915) ստեղծագործության մեջ Վ. Բրյուսովը խոստովանում է, որ Հայաստանը մի երկիր է, որտեղ «շիրիմ» է որոնել, բայց՝

... Լոկ աշխարհ գտա միշտ ստեղծարար.
Զնգացին բացվող օրվա պես պայծառ
Հին-հին օրերի սրինգները վես,
Եվ մահվան դաշտը դարձավ ծաղկավառ:

Այդ ձայնն էր ո՛չ թե մեռած, հի՛ն ասքի,
Այլ անմահ սիրո՛ւ լի ողջույնով ժիր.
Եվ դաշտերը մի որոտմունքով զիլ
Կոչ հղեցին ինձ խոր ու սրտագին,

¹¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Յ ա կ ա ղ յ ա ն. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003.

¹² Ա. Յ ա կ ա ղ յ ա ն. Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акме». Ереван, 2011, с. 74.

Եվ կոչն այդ ահեղ ավետեց, – ապրի՛ր...

... Հայաստա՛ն, այսօր ձայնըդ հնուցվան
Թարմաշունչ հով է – ամառվա տոթին.
Եվ այնքա՛ն շարժուն, և կայտա՛ռ այնքան,
Որ այդ, անձրևից թեք հասկի նման,
Ուղղում եմ ահա ես ինձ վերստին:

Հայ ժողովրդի ապագայի նկատմամբ մեծ հավատով է տոգորված «Հայերին» (1916) բանաստեղծությունը: Հեղինակը պատմում է Հայաստանի անցյալի մասին, թե ինչպես հայ ժողովուրդը դիմակայեց աշխարհի «Հազար հողմեր մահահնչյուն»՝ երբեք չկորցնելով հույսը, մնաց և պահեց իր սրբությունները և այժմ թափառող ցեղերի ամբոխի մեջ Հայաստանը հպարտորեն կրում է իր «բազմադարյան պսակը»: Բանաստեղծը վստահ է, որ՝

Տիգրանի ազգը հաղթական
Հողմից, մութից դուրս կգա հար, –
Հանուն սիրո անապական
Ու սխրանքի նոր ու պայծառ, –

և կվերածնվի նոր կյանքի համար:

Բրյուսովի՝ Հայաստանին նվիրված ստեղծագործություններում հատուկ տեղ ունի հայ ժողովրդի անցյալը, պատմահերոսական թեման («Տիգրան Մեծ», «Հաղթանակը Կարբում», «Ազատություն և պատերազմ», «Թագավորի աղոթքը»): «Արարատին», «Արարատը Երևանից» գործերում Արարատը խորհրդանշում է հայ ժողովրդի իմաստությունն ու հավատը վաղվա օրվա հանդեպ:

Գրող Իվան Բունինը հայ ժողովրդի ողբերգությունը հիշատակում է «Ոլորուն ականջներ» (1916) պատմվածքում: Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի արյունոտ իրադարձություններին՝ նա դնում է յուրաքանչյուր անհատի, մարդու պատասխանատվության հարցը աշխարհում կատարվածի համար: Պատմվածքի գլխավոր հերոսը՝ Ադամ Սոկոլովիչը, դատապարտում է հայերի նկատմամբ կատարված արյունոտ ոճիրը:

Ողբերգական հայ իրականությունը ցնցել է և ռուս այլ բանաստեղծների, գրողների, որոնք իրենց ստեղծագործություններում նկարագրել են Արևմտյան Հայաստանի ավերումի ու ամայացման պատկերները, հայ ժողովրդի ծանր բախտն ու տառապանքը: Ալեքսանդր Կուշլյուի «Վանի գագել», «Ավերված Վան» (1916) բանաստեղծություններում երբեմնի ծաղկուն քաղաքի ավերակների վերածման պատկերն է, վանեցիների դառը ճակատագիրը: Ցավով ու տառապանքով են լցված

նան Կոնստանտին Սայանսկու 1916-ին գրած «Հայաստան», «Մոռացվածք», «Մեծ նահատակին», «Մեռյալների երթը» բանաստեղծությունները: Ստեփան Կրոտկիի «Բարև Հայաստան», «Հանուն հայրենիքի երջանկության» (1916) և այլ բանաստեղծություններում հույս է հայտնվում, որ ավերված երկիրը ուժ կգտնի վերածնվելու, որ Հայաստանի համար կգան երջանիկ օրեր, ժողովուրդը կազատագրվի «կոտորածի սարսափներից»:

1916–1917-ին Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարք է գրել Եկատերինա Ալեքսեևան: Նա ևս հույս է հայտնում, որ շուտով այդ «հպարտ երկրում կգրվի գիշերային մշուշը», կանհետանա «չար գիշերը», և կբացվի ազատության արշալույսը: Բանաստեղծ Ս. Պ. Կրոտկովը, որը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել էր Արևմտյան Հայաստանում, հայ կամավորների խիզախ գործողությունների տպավորության տակ գրել է «Հայ ջոկատի երգը» և այլ բանաստեղծություններ՝ նվիրված ազատության համար հայերի մղած պայքարին: Հայաստանին, հայ ժողովրդին, ազգային-ազատագրական պայքարի հերոսներին մի շարք բանաստեղծություններ են ձևել Սերգեյ Չարովը և Յուրի Վերխովսկին:

Հայ իրականության ողբերգական իրադարձությունները հիմք են ծառայել նաև արձակ գործերի համար: Հայկական կամավորական ջոկատներից մեկի հրամանատար Քեռու (Ա. Գաֆայյան) քաջարի գործողություններն ու մահը նկարագրված են ականատես Դ. Դավիդովի «Քեռի» ակնարկում: Վալերի Յազվիցկին «Հայ փախստականները Բուլղարիայից» հրապարակման մեջ արձանագրում է Թուրքիայից փախած հայերի սարսափելի վիճակը: Նա ճանաչել է նաև հայ ազգային հերոս Անդրանիկին և «Հայ հերոսը» ակնարկում ստեղծել է վառ անհատի կերպարը:

Լրագրող, գրող Արիադնա Տիրկովան (Ա. Վերգեժսկի) աշխատակցել է «Բիրժնիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի» թերթերին, 1911–1912-ին եղել է Թուրքիայում: Գրել է «Հին Թուրքիան և երիտթուրքերը: Մեկ տարի Կոստանդնուպոլսում» (1916) գիրքը, որտեղ հանգամանորեն քննել է թուրքական իրականության բազմազան կողմերը: Համեմատելով Օսմանյան կայսրության և երիտթուրքերի քաղաքականությունը՝ Տիրկովան նշել է. «Հայ ժողովրդի անօրինակ կոտորածը ապացուցում է, որ չնայած Եվրոպայից փոխառնված ծրագրերին ու կարգախոսներին, երիտթուրքերը, ըստ էության, ոչնչով չեն տարբերվում հին թուրքերից»¹³: Տիրկովան գտնում էր, որ հայերի ջարդերի պատմությունը «արյունոտ տառերով գրված դատավճիռ է երիտթուրքերին»¹⁴: Խոսելով Թուրքիայում հայերի կոտորածների մասին՝ նա գրել է. «Հայկական ջարդերի նկարագրությունը հիշեցնում է հին կոտորածների սարսափելի տարեգրությունը, երբ հաղթողները սպանում և տանջում,

¹³ А. Тыркова. Старая Турция и младотурки. Год в Константинополе. Пг., 1916, с. 7.

¹⁴ Նույն տեղում, էջ 127:

թալանում ու բռնաբարում էին պարտվածներին այնպիսի սանձարձակությամբ, ինչպիսին հատուկ է գազաններից միայն մարդուն: 1896 թ. հենց Կոստանդնուպոլսում 3 օրվա ընթացքում սպանվել է 10 հազ. հայ, չխոսելով տասնյակ հազարներով սպանվածների ու վիրավորների, թալանվածների մասին՝ մեծ ու փոքր գավառական քաղաքներում: Աբդուլ Համիդի տապալումից հետո, և սահմանադրության հռչակումից անմիջապես հետո, իրագործվեց Ադանայի ջարդը¹⁵: Վերլուծելով Թուրքիայի քաղաքական վիճակը՝ Տիրկովան նշել է, որ Դաշնակցություն հայկական կուսակցությունը միակ քաղաքական ուժն էր, որ մտահոգված էր ոչ միայն հայերի ճակատագրով, այլև Թուրքիայի զարգացման հեռանկարով:

Հայ ժողովրդի կրած տառապանքն առավել խոր ու վառ արտացոլված է բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու ստեղծագործության մեջ: 1916-ին Արևմտյան Հայաստանում նա դարձավ հայ ազգաբնակչության ջարդերի ականատեսը: Գորոդեցկու հոդվածների և ակնարկների շարքը՝ «Գետակների ու հրաբուխների երկրում», «Հրակարմիր մրրկայուն», «Շամիրամի այգիները» վեպերը հեղինակի մտորումներն են Արևմտյան Հայաստանի և նրա բազմաչարչար ժողովրդի ճակատագրի մասին: «Ավերված դրախտ»-ում կարդում ենք. «Անտանելի է, երբ մտածում ես, որ հարյուր հազարավոր խաղաղ, անպաշտպան մարդիկ հենց մարդկանց ձեռքով ենթարկվել են վայրագության անլուր խոշտանգումների, մարմնի և հոգու նրբարվեստ լլկանքների... Անուղղելի չարիք, անջնջելի խայտառակություն, անգոր ցասում մարդկային հոգուն հասցված անարգանքի համար – ահա... այն զգացումները, որ հարուցում է Թուրքիան»¹⁶:

Արևմտյան Հայաստանում՝ Վանում, ամենօրյա հոգեցունց տպավորություններով, հույզերով ու ապրումներով հյուսվել են բանաստեղծություններ՝ «Դրախտի երգեր» խորագրով և «Երկնքում դրախտն է, երկրի վրա՝ Վանը» բնաբանով: Դրանք են՝ «Այգի», «Որտե՞ղ են նրանք», «Աղջկա ձեռքերը», «Վան», «Երեխան», «Հոգեկան հիվանդը», «Հոգեհանգիստ», «Հրաժեշտ» գործերը, որոնք տպագրվել են Մոսկվայում՝ «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթում: Ակնհայտորեն, այդ բանաստեղծությունները կատարում են իրենց դերը՝ ռուս առաջադեմ հասարակայնության կարծիքը ձևավորում էին հոգուտ հայ ժողովրդի: Եվ ահա՛, 1918 թ. մարտի սկզբին դրանք Թիֆլիսում լույս են տեսնում առանձին գրքույկով հավելվող նոր բանաստեղծություններով՝ «Հայաստանի հրեշտակը» խորագրով: Գրքույկում զետեղված գործերում բոլոր խորհուրդներից ավելի Ս. Գորոդեցկին երագում է լսել Հայաստան աշխարհի «հարության համբավը»: Մի աշխարհ, որի հրաշագեղ բնության,

¹⁵ Նույն տեղում, էջ 62–63:

¹⁶ Ա. Զ ա ք ա ռ յ ա ն. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, էջ 17–18:

«գեղջկական բախտավոր կյանքի» և առկա ճակատագրի հակադրվող պատկերներով կառուցված է ամբողջ շարքը: Թեև նկատելի նկարագրությամբ, երգվում են «երկնային դրախտից» «արյունոտ հովիտի» վերածված Արևմտյան Հայաստանի անվերջանալի ցավերը՝ շրջանակված Արճակի, Միփանի, Վանի գեղատեսիլ պատկերներով, երկրի անշարժ ու լռին հիշատակներով, որոնց միջից իրենց բողոքի ձայնն են բարձրացնում համատարած ավերակները, դաշտերում փռված ոսկորները, մարդկային վշտալի ստվերները: Եվ, սակայն, որքան էլ ճակատագիրը ողբերգական է, «Հրաժեշտ» բանաստեղծության մեջ Գորոդեցկին լի է հայ ժողովրդի փրկության հավատով, համոզված է՝

... Որ կյանքի երգը հավերժ է հնչում,
 Որ ապարդյուն է հորանջը մահվան:
 Որ մարդիկ երբեք անհետ չեն կորչում¹⁷:

Այս գաղափարն ավելի իմաստալի շեշտադրումներով և հուզական շիկացումով մարմնավորված ենք տեսնում 1918 թ. Հայաստանի ծանր օրերին հյուսված «Հայաստանի հրեշտակը» բանաստեղծության մեջ, որը հայոց ավեր հայրենիքի, ջարդված, զարկված ու զրկված ժողովրդի ընդհանրական պատկեր է: Քառյակ առ քառյակ այն ծավալվում է այդ երկրի և ժողովրդի կրած աղետների, ողբերգական ճակատագրի ցուցադրումով: Բանաստեղծության մտահղացմանը համապատասխան՝ ի տես երկնքում սավառնող հրեշտակի՝ այդ տեսարանները բացվում են երկնքից, շերտ առ շերտ, մեկը մյուսից զարհուրելի: Արարատի և Միփանի գագաթներից ներքև՝

... Ամպի նման տոթ,
 Ամպի նման խիտ, գալիս հավաքվում,
 Հովիտներն ի վար՝ ծուխն էր ալիքվում, –
 Ավերակների ծուխը դառնահոտ:

Նրա ներքևում – լեռնալանջերին
 Եվ բացատների լռության մեջ խոր
 Հայերի ճերմակ ոսկորներն էին
 Շողշողում որպես մարգարտահյուս գորգ:

Եվ ինչ-որ մի տեղ կաձանով վայրի
 Քարշ էին գալիս զարկված ու զրկված՝
 Խոցված, խոշտանգված, խեղճ հողի՝ վերջին

¹⁷ Ս. Գորոդեցկի. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1980, էջ 26:

Ժառանգորդները ամենքից լքված¹⁸:

Ջուգոռդական եղանակով բանաստեղծ-նկարչի ձեռքով դրոշմվող այս պատկերներին հաջորդում է ցասկոտ հրեշտակի կանչը՝ ինչպես «խոսքերի թեժ ջրվեժ» թափվելով շրթունքներն ի վար:

– Բարձրացի՛ր, երկիր, մոխիրներից տաք
Եվ համախմբիր ցրված ու անտուն
Քո որդիներին... դարձրու կուռ բանակ:
Ես քեզ մի նորոգ կյանք եմ ավետում...

Գորոդեցկին դիմում է Հայաստանի պահպան հրեշտակին, խոսում նրա անունից՝ հուսահատ ու խոշտանգված, ահաբեկված ու տարագիր հայությանը ներարկելով պայքարի կորով, հույս ու հավատ:

1917–1921-ին ռուս բանաստեղծը ապրել և գործել է Անդրկովկասում, մասնակցել երկրամասի մշակութալուսավորական կյանքին, շփվել հայ մտավորականների, առանձնապես՝ Հովհ. Թումանյանի հետ: «Պատասխան Հովհաննես Թումանյանին», «Ժանգոտված գրիչներ», «Նոր վերք», «Կենդանի գերեզմանոց», «Հայաստանի աղետները», «Վերջին ճիչը», «Ղարաբաղ» հրապարակախոսական հոդվածներում, նաև «Ճանապարհորդություն դեպի Երևան» շարքում, Հայկական հարցի շուրջ իր դասախոսություններում և ելույթներում Գորոդեցկին պաշտպանել է հայ ժողովրդի շահերը, մերկացրել եվրոպական տերությունների գաղութատիրական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, խոր հավատ հայտնել վերջինիս կենսունակության հանդեպ: «Եվ երբեք չեն կործանվում այն ժողովուրդները, որոնք կարողանում են ծանրագույն դժբախտությունների և ստորացումների պահերին պահպանել իրենց ազգային արժանապատվությունը: Չի կործանվի և Հայաստանը»¹⁹, – գրել է ռուս բանաստեղծը “Pro Armenia” հոդվածում: «Ղարաբաղ» վերնագրով հոդվածում Գորոդեցկին նշել է երկրամասի կարևոր դերը Հայաստանի համար. «Լինելով միասնական ազգագրականորեն, տնտեսապես ու լեզվով, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին է այժմ, այդպիսին կլինի նա միշտ»²⁰:

Գրող, դրամատուրգ Մերգել Ռաֆայլովիչը 1918–1920-ին ակտիվ մասնակցություն է ունեցել Անդրկովկասի (Թիֆլիս, Բաքու) հասարակական-գրական կյանքին:

¹⁸ Նույն տեղում, էջ 31:

¹⁹ Ա. Չ ա ք ա ռ յ ա ն. Մերգել Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, էջ 94–95:

²⁰ «Кавказское слово» (Тифлис), 23. III. 1919.

Գրել է հոդվածներ Հայաստանի, հայ ժողովրդի ողբերգության մասին: Նա Բաքվի 1918-ի սեպտեմբերյան իրադարձությունների ակնատեսն էր, երբ ադրբեջանաթուրքական հրոսակները կոտորեցին շուրջ 30 հազ. հայ: «Ճշմարտությունը Բաքվի դեպքերի մասին» հոդվածում Ռաֆայելիչը գրել է. «Իմ վկայությունները պետք է ընկալվեն իբրև բացարձակ անկողմնակալ ակնատեսի ցուցմունք..., որը բխում է բացառապես արդարության և ճշմարտության վրդովված զգացումից, տալ փաստերի անկողմնակալ և իրական մեկնաբանությունը, փաստեր, որոնք խեղաթյուրվում են անթույլատրելի թեթևամտությամբ...»²¹: Հոդվածը մեկ անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ Բաքվի կոմունայի անկումից, քաղաքը թուրքերի գրավումից և մուսավաթական կառավարության ստեղծումից հետո իրագործվել է հայ բնակչության նպաստակաղրված կոտորած: «Ազատություն մեռյալներին (“Pro Armenia”)» հոդվածում Ռաֆայելիչը մերկացրել է եվրոպական տերությունների քաղաքականությունը. «Եվրոպան ծանր մեղք ունի բազմաթիվ փոքր ժողովուրդների հանդեպ, որոնց թվում՝ իրեն բաժին ընկած տառապանքների չափով, կարևորագույն տեղ ունի հայ ժողովուրդը: Եվ եթե մինչև այժմ քաղաքական բարդ հարաբերություններն ու հնարքները, տխրահոշակ եվրոպական հավասարակշռությունը խանգարել են ներկայիս հաղթողներին խոսքից գործի անցնել և ստիպել են նրանց բավարարվել բարեմաղթանքներով ու հորդորներով, ապա վերջապես եկել է ժամանակը քավելու իրենց մեղքերը և օգտվելու նոր քաղաքական իրադրությունից, ամենից առաջ այն բանի համար, որ ուղղվի դարավոր անարդարությունն ու փրկվեն կոտորվողները»²²:

Գրական գործիչ, լրագրող Պյոտր Սիբիրցևը հայ ազգային-ազատագրական պայքարի լեգենդար գործիչ, գորավար Անդրանիկի ջոկատի կազմում 1918 թ. գարնանն ու ամռանը անմիջական մասնակցություն է ունեցել թուրքական զորքերի դեմ մղված ռազմական գործողություններին²³: Մինչև 1920-ի վերջը ապրել և ստեղծագործել է Անդրկովկասում, խմբագրել «Պրոբուժենիե» թերթը, կազմել «Պրոլետարի» թատերախումբը, բեմադրել ներկայացումներ: Հոդվածներով հանդես է եկել հայ ժողովրդի, նրա արդար գործի և իրավունքների պաշտպանությամբ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում “Pro Armenia” հոդվածը, ուր, մասնավորապես, ասված է. «Բոլոր ճանապարհներին..., ժայռերին ու զետերի ափերին, ամենուր հանդիպում էի գաղթականների քարավանների ու ամենուր բախվում սովի, սառնամանիքի ու կեղտի նույն պատկերների: Այսպես, ժայռերին ու ճանապարհներին զոհվել և զոհվում է հայ ազգը, հայ ժողովուրդը, զոհվում են քաղաքական

²¹ «Кавказское слово», 3. XII. 1919.

²² «Закавказское слово» (Тифлис), 8. XII. 1919.

²³ *Տե՛ս Սեյ և Սորուչիկ Ալեքսեյ Կոլմակով*. Историческая армянская рота. Сост. и под. к изданию А. Закарян. Ереван, 2009.

թշնամանքից հեռու անմեղ մարդիկ... և նրանց պետք է փրկել: Սա ողջ մարդկության պարտքն է»²⁴:

Պ. Միքիթցը գրի է առել հայկական ժողովրդական հեքիաթներ և առակներ, Հաստանին ու հայ ժողովրդին ձոնել է բանաստեղծություններ: Այսպես, «Հայաստան» բանաստեղծության մեջ նա սրտի ցավով է նկարագրում հայ ժողովրդի տառապանքները, նրա տողերում հնչում է բողոքի ձայնը և հավատ մեր երկրի լուսավոր ապագայի հանդեպ: Ահա այդ բանաստեղծությունը՝ մասամբ կրճատված.

*Я видел скорбный лик Армении убогой,
Я слышал робкий плач блуждающих детей...
Я шел по грудам тел случайною дорогой
И видел: кровь и дым, и зарево огней
Я шел сквозь море слез, сквозь камни павших зданий.
Я видел на полях обломки мирных сох...
О, скорбный край! Край смерти и скитаний,
Как жуток и велик твой безысходный вздох!
Я слышал песнь твою, рожденную сквозь муки,
Я слышал песнь твоей замученной души...
Пугали мысль мою рыдающие звуки
И прятались, как тать, в чернеющей глуши,
Я шел сквозь лужи слез, сквозь пепел древних зданий,
В душе моей звучал плач многих матерей...
Печальный край! Край вечных испытаний,
Не счесть тебе гробниц загубленных детей.
Не счесть тебе всех жертв столетних озлоблений,
Ты вправе крикнуть в мире: Довольно смутных дней!
Ты гордо пережил безумие гонений
И хохот дерзостный издавших палачей!
Сквозь дым твоих полей, сквозь кровь твоих селений
Загрязился конец пожарам
жутких битв...
Армянский край! Край скорби и терпений,
Твой близок час – час жизни и молитв!»²⁵*

1920 թ. գարնանից Անդրկովկասում է եղել արձակագիր Բորիս Լազարևսկին: Նա գրում էր պատմվածքներ գլխավորապես սիրո թեմաներով՝ Չեխովի, Կուպրինի հետևությամբ և հաճախ նմանակելով նրանց: Բ. Լազարևսկին իրեն համարում էր կանացի սեռի հոգեբան-մասնագետ, որը վկայում են և նրա գրքերի վերնագրե-

²⁴ Նույն տեղում, էջ 12:

²⁵ «Наше время» (Баку), 16. IV. 1919.

րը՝ «Վենյա (մի կանացի հոգու պատմություն)», «Կնոջ հոգին» և այլն: Իր այդ նախասիրությամբ էլ նա ներկայանում է Թիֆլիսում ու Երևանում, որտեղ դասախոսություններ է կարդում «Հայաստանի օրիորդները և կանայք» թեմայով: Արդեն իսկ աշնանը՝ Կ. Պոլսով Փարիզ մեկնելիս, նրբին տպավորություններով ու զգացմունքներով շարադրված այդ դասախոսություններն ամբողջացնում և արևմտահայ թարգմանությամբ՝ «Հայաստանի աղջիկներն ու կիները» վերնագրով, «Ճակատամարտ» թերթի հոկտեմբերյան համարներում տպագրում է իր ծավալուն ակնարկաշարքը: Այն հայ ժողովրդի ցեղասպանությանն արձագանքող ուշագրավ նյութ է, որ սկսում է XVII դ. անգլիական բուրժուական հեղափոխության ականավոր գործիչ, աշխարհահռչակ բանաստեղծ, հումանիստ, նաև կրոնաքաղաքական գործերի հեղինակ Ջոն Միլթոնի վկայակոչմամբ. «Միլտոնի նշանավոր բանաստեղծությունը՝ «Դրախտ կորուսյալը», կվերջանա Աստուծո և սատանայի կատարյալ գժտության նկարագրությամբ: Երրորդ երգին վերջին խոսքերն են. «Սատանան խորին ողջույնով մը պատշաճ հարգանքը հայտնեց երկնային ոգիին, լքեց արևուն ճանապարհը և շտապեց դեպի երկիր. իր թռիչքի ընթացքին քանի մը ցնծալի ուստումներե վերջ հասավ Նպատ լեռան գագաթը» (Նպատը Հայաստանի ձյունածածկ լեռն է):

Անշուշտ, սահկա պարզ հեքիաթ մըն է, որուն ծագումը շատ հեռավոր անցյալի մը կհասնի: Բայց երբ կմտածեմ այն բոլոր տառապանքներուն վրա, որոնց ենթարկվեցավ Հայաստանը մասնավորաբար վերջին դարերու ընթացքին, կմղվիմ հավատալու, որ սատանան իրավունք ուներ իր արկածախնդրությունները Հայաստանեն սկսելու»²⁶: Շարունակենք. «Եվ վերջը վերջը Հայաստանի մեջ իմ բնակության միջոցին, այդ բոլոր առասպելները մեկդի նետելով, հաճախ կմտածեի, որ չորս կողմեն թշնամիներով պաշարված ժողովուրդի մը ուրիշ բան չէր մնար, բայց եթե կորսցնել ավելի բախտավոր ապագայի մը ամեն հույս:

Այս մտածումը իմ հետաքրքրությունս շարժեց: Ո՞վ է ուրեմն այս ժողովուրդը, որ հակառակ այս դժոխային պայմաններուն չէ ջնջված, չէ փոխակերպված անասուններու կամ օրանգութանի ցեղի մը, այլ, ընդհակառակը, սոված է ստեղծագործ այրերու և կիներու ամբողջ սերունդ մը, որ այնքան նրբությամբ կհասկնա գեղեցիկը: Աչքերը հոգիին հայելին են: Ես տեսած եմ երկրագունդին գրեթե բոլոր ժողովուրդները և պետք է խոստովանիմ, թե ոչ մեկ տեղ տեսած չեմ այնքան պերճախոս բիբեր, որքան Հայերուն և մանավանդ Հայուհիներուն բիբերը: ... կրկնեմ. Հայերուն և մասնավորաբար հայ կիներուն և աղջիկներուն աչքերը հաճախ կպատմեն համարձակ և արտահայտիչ կերպով այն, ինչ որ չպիտի կրնային արտահայտել իրենց բերանները:

²⁶ Ա. Զ ա ք ա ռ յ ա ն. Բորիս Լագարեսկին Հայաստանի և հայ կանանց մասին, Երևան, 2004, էջ 58:

Բնձի կյթվի, թե աստոր պատճառը այն է, որ մտածումներու խորությունը կախում ունի տառապանքի ուժգնութենէն, իսկ տառապանքի տեսակետով հայ ժողովուրդը ասոջին տեղը կգրավե աշխարհին մեջ...»²⁷:

Հայ աղջիկներին ու կանանց վերաբերող ռուս ուսումնասիրող-ականատեսի հայացքների ու գնահատանքի անդրադարձի վերծանման-իմաստավորման բանալին ևս տրամադրում է հեղինակը՝ հակիրճ ամփոփումով. «Անգամ մը փողոցէն անցած ատեն հետևյալ խոսքը լսեցի. «Հայերը իրենք են պատասխանատուն իրենց կրած դժբախտությանց»:

Խոսքին շարունակությունը չլսեցի, բայց ըսել կուզեին, թե չարժեք Հայերու վրա մտածել կամ խոսիլ: Ես քաղաքականութենէ չեմ հասկնար, աստիկա իմ գործս չէ, բայց գրողի հոտատությունը ինձ կզգացնէ, թե աստիկա բոլորովին ճիշտ չէ:

Ենթադրենք, թե այդ մեղադրողը կամ անձարակ հոգեբանը քիչ մը իրավունք ունէր իր խոսքին մեջ. «Հայերը իրենք են հանցավորը»: Բայց ան չհամարձակվեց ավելացնել «նա՛ն Հայուհիները»: Եվ սակայն ոչ միայն իմ, այլև ուրիշներու կողմէ մեջբերված իրողությունները կապացուցանեն, որ Վանի լճին մոտ և Ղարաբաղի մեջ ամենէն ավելի կիները, աղջիկները և մանուկներն են, որ տառապեցան: ... – Ինչէ՛ր կան խոսելիք Հայաստանի աղջիկներու և կիներու ճակատագրի մասին, և պետք է այդ բոլորը ըսել այնպէս, որ ամբողջ աշխարհը լսէ և մտածէ այդ լռակյաց և հլու դժբախտներուն վրա...»²⁸:

Ամփոփելով՝ նկատենք. ռուս գրական գործիչները, անդրադառնալով հայոց ողբերգությանը, հանդես գալով հայ ժողովրդի պաշտպանությամբ՝ ռուս հասարակայնությանը ծանոթացնում էին Հայաստանի պատմությանը, Հայկական հարցի էությանը, Հայոց ցեղասպանության իրական պատճառներին, ցասումով արձագանքում հայերի կոտորածներին՝ կոչ անելով մարդկությանը օգնել կործանվող ժողովրդին:

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИЯХ РУССКИХ ЛИТЕРАТУРНЫХ ДЕЯТЕЛЕЙ

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

К Геноциду армян и Армянскому вопросу русские литературные деятели обращались со второй половины 1890-х годов. Е. Алибекова, Е. Морозов, В. Шуфан, Ю. Веселовский, М.

²⁷ Նույն տեղում, էջ 58–59:

²⁸ Նույն տեղում, էջ 83:

Горький, Т. Ольгинин, В. Плетнев, В. Немирович-Данченко, Ал. Кулебякин, В. Брюсов, И. Бунин, А. Тыркова, С. Городецкий, С. Рафалович, П. Сибирцев, Б. Лазаревский и др., касаясь трагедии армянского народа, выступая в его защиту, знакомили русскую общественность с историей Армении, сутью Армянского вопроса, истинными причинами Геноцида, гневно откликались на резню армян, призывая все человечество протянуть руку помощи страдающему народу.

THE REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE WORKS OF RUSSIAN LITERARY FIGURES

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

Russian literary figures have recurred to the Armenian Genocide and the Armenian Question from the second half of the 1890s. Concerning the tragedy of the Armenian people, speaking of its protection, Ye. Alibekova, Ye. Morozov, V. Shufan, Yu. Veselovsky, M. Gorky, T. Olgenin, V. Pletnyov, V. Nemirovich-Danchenko, Al. Kulebyakin, V. Bryusov, I. Bunin, A. Tirkova, S. Gorodetsky, S. Rafalovich, P. Sibirtsev, B. Lazarevsky and others acquainted the Russian society with the Armenian history, the essence of the Armenian Question, the real reasons of the Armenian Genocide, responding in anger to the Armenian massacres, appealing to the whole humanity to hold hand for aid of the suffering nation.